

ընկերը կը պատասխանէր. « Ստ ի՞նչ կալածի է, հիշ կը մոռնամ եղիլ է, ատ շատ ինթեռէսնի բան է ու ». երրորդ մի « Սս իրկուն սատ (զրօսարան) կու գանս ». չորրորդը կը պատասխանէ « Օխթնի ութնի արալըխ խայրէթ կ'անիմ գալու, առաջ չիմ կարնալ ». ասոնք և այլ ասոնց նման աշայ - մաշայ, ափաշ - քափաշ, ձորով - մորով բացատրութիւնք, որոց քչէն կարելի է մնացեալն գուշակել: Այս ևս հարկաւոր է աւելցընել, որ Նախիջևանցիք իրենց համար առանձին զատ քաղաք և բնակութիւն ունենալով, յօտարաց ամենեւին ակնածութիւն չունին, և տան և փողոցի մէջ ամենեւին տարբերութիւն չեն դնել. շատ անգամ տան մէջ և այն՝ ցած ձայնով լինելու բացատրութիւնք կամ խօսք, հրապարակներու վրայ բարձրաձայն կը հնչեն: Այլ ինձ, այս պարագայիս մէջ, ամենայն բառ, ամեն հայկական խօսք կամ զրոյցք քաղցր կը հնչէր. այդպէս սիրելի է սովորութեան օրէնքըն, և ախորժելի հայրենեաց յիշատակն:

Հասայ շուտով մեծարգոյ բարեկամիս տունը, որոյ սիրալիր հիւրընկալութիւնն առաջին վայրկենէ մինչև մեկնելու օրս, մեծապէս զիս պարտաւորած է: Նախիջևանու արժանի յիշատակի շինութեանց վրայ խօսելէն առաջ՝ մի քանի խօսք զրուցեմ զոցա աշխարհաբար լեզուին վրայ, որոյ ազաւաղմունքն արդէն քանի մի բառով քիչ մ'առաջ յիշեցինք: Այդ բարբառոյն վրայ յիրաւի երկարօրէն խորհրդածել կարևոր է. զի այդ այն սրբազան աւանդն է՝ զոր յընթացս 600 տարիներու պահած է իրեն սեփական յատկանիչ Անեցի ոստանիկ ժողովուրդն, որով կը զանազանի յօտարաց, որով կը տածէ ոգի ազգի և սէր հայրենեաց: